ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՊՈՏՈՍՅԱՆ ՎԱՀԱՆ ԱԿՍԵԼԻ

ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ, ԼԵՌՆԱՅԻՆ ԵՎ ԲԱՐՁՐ ԼԵՌՆԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ

ԻԴ. 03.01. «Աշխարհագրություն» մասնագիտությամբ աշխարհագրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՄԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2019

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

ИНСТИТУТ ГЕОЛОГИЧЕСКИХ НАУК

ПОТОСЯН ВАГАН АКСЕЛЕВИЧ

ПРОБЛЕМЫ РАЗВИТИЯ РАССЕЛЕНИЯ НА ПРИГРАНИЧНЫХ, ГОРНЫХ И ВЫСОКОГОРНЫХ ТЕРРИТОРИЯХ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени
кандидата географических наук по специальности 24.03.01

ЕРЕВАН-2019

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար.
աշխ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր **Ավագյան Արամայիս Ռուստամի**

Պաշտոնական ընդդիմախոսներ.
աշխ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր **Կարապետյան Գևորգ Մելքոնի**
աշխ. գիտ. թեկնածու **Սուջյան Սերոբ Արամի**

Առաջատար կազմակերպություն. **«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամ**

Պաշտպանությունը կայանալու է 2019թ. հուլիսի 15-ին ժամը 12:00-ին ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտում գործող 054 Երկրաբանություն մասնագիտական խորհրդի նիստում,
Հասցեն՝ Երևան 0019, Մարշալ Բաղրամյան պող. 24ա:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ ԵԳԻ գրադարանում:
Սեղմագիրն առաքված է 5.06.2019թ.
054 մասնագիտական խորհրդի գիտքարտուղար,
երկրաբ. գիտ. թեկնածու **Սահակյան Լիլիթ Հրանտի**

Тема диссертации утверждена в Ереванском государственном университете.

Научный руководитель:
доктор геогр. наук, профессор **Авагян Арамаис Рустамович**

Официальные оппоненты:
доктор геогр. наук, профессор **Карапетян Геворг Мелконович**
канд. геогр. наук **Суджян Сероб Арамович**

Ведущая организация: фонд «Ширакский Государственный университет имени М. Налбандяна»

Защита диссертации состоится 15-ого июля 2019г., в 12:00, на заседании Специализированного совета 054 “Геология” при Институте геологических наук НАН РА Адресс: 0019 Ереван, пр. Маршала Баграмяна 24а.

С диссертацией можно ознакомиться в библиотеке ИГН НАН РА.
Автореферат разослан 5-ого июня 2019г.

Ученый секретарь Специализированного совета 054,
канд. геол. наук **Саакян Лилит Грантовна**

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: ՀՀ-ում լեռնային և բարձր լեռնային տարածքները զբաղեցնում են երկրի ցամաքային տարածքի համապատասխանաբար 18 և 42,5%-ը: Այդպիսի տարածքներում են գտնվում ՀՀ 13 քաղաք և 347 մշտական բնակչությամբ գյուղ, որոնց 2018թ. դրությամբ բաժին էր ընկնում ՀՀ բնակչության 17,3%-ը, մշտական բնակչություն ունեցող բնակավայրերի՝ 37%-ը:

ՀՀ ժամանակակից աշխարհաքաղաքական իրավիճակում առանձնակի կարևորություն ունեն նաև սահմանամերձ տարածքները, որոնք զբաղեցնում են երկրի տարածքի մոտ 24%-ը: ՀՀ սահմանամերձ գոտում են գտնվում ՀՀ մշտական բնակչություն ունեցող բնակավայրերի ընդհանուր թվի 20,4%-ը՝ 9 քաղաք և մշտական բնակչություն ունեցող 190 գյուղ (ՀՀ գյուղերի 20,6%-ը):

ՀՀ սահմանամերձ, լեռնային և բարձր լեռնային տարածքների սոցիալ-տնտեսական զարգացումը, մարդկային ներուժի, տարածքային ու այլ ռեսուրսների արդյունավետ օգտագործումը, ինչպես նաև առկա հիմնախնդիրների լուծումը պայմանավորված է նաև նշված տարածքներում տարաբնակեցման մեջ տեղի ունեցող գործընթացներից, դրանց արդյունավետ կազմակերպումից, առկա հիմնախնդիրների բացահայտումից և կառավարումից: Հետևաբար, ՀՀ սահմանամերձ, լեռնային և բարձր լեռնային տարածքների տարաբնակեցման արդի վիճակի հետազոտությունը՝ առկա հիմնախնդիրների բացահայտումը և լուծման ուղիների մատնանշումը խիստ արդիական է և ունի գիտա-կիրառական կարևոր նշանակություն:

Հետազոտության նպատակն է կատարել ՀՀ լեռնային, բարձր լեռնային և սահմանամերձ տարածքների տարաբնակեցման համալիրային աշխարհագրական հետազոտություն՝ բացահայտել նշված տարածքների բնակչության ու բնակավայրերի տեղաբաշխման, բնակավայրերի մարդաքանակի և տարաբնակեցման տարածքային կառուցվածքի առանձնահատկություններն ու բնորոշ գծերը, տարաբնակեցման շարժընթացի հետ կապված առկա հիմնախնդիրները, մատնանշել լուծման ուղիները:

Հետազոտության խնդիրներն են.

1) հիմնավորել ՀՀ սահմանամերձ, լեռնային և բարձր լեռնային տարածքների տարաբնակեցման աշխարհագրական հետազոտության հիմնահարցերի շրջանակը,
2) կատարել ՀՀ սահմանամերձ, լեռնային և բարձր լեռնային տարածքների տարաբնակեցման ժամանակակից հենքի ձևավորման վերլուծություն,
3) ցույց տալ ՀՀ սահմանամերձ, լեռնային և բարձր լեռնային տարածքների տարաբնակեցման ժամանակակից պատկերի առանձնահատկությունները, տարածքային տարբերությունները և բնորոշ գծերը,
4) բացահայտել ՀՀ սահմանամերձ, լեռնային և բարձր լեռնային տարածքների տարաբնակեցման շարժընթացի ժամանակակից միտումները և առկա հիմնախնդիրները,
5) կատարել սահմանամերձ, լեռնային և բարձր լեռնային գյուղական բնակավայրերի բնակչության տարիքային կառուցվածքի վերլուծություն և հիմնախնդիրների բացահայտում,

6) կատարել ՀՀ սահմանամերձ, լեռնային և բարձր լեռնային տարածքներում վարչատարածքային բաժանման և տարաբնակեցման տարածքային կառուցվածքի փոխազդեցության վերլուծություն և գնահատում,
7) մատնանշել սահմանամերձ, լեռնային և բարձր լեռնային տարածքներում տարաբնակեցման առկա հիմնախնդիրների լուծման ուղիները:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտը ՀՀ սահմանամերձ, լեռնային և բարձր լեռնային տարածքների տարաբնակեցումն է, առարկան՝ նշված տարածքներում տարաբնակեցման առկա իրավիճակի, շարժընթացի և հիմնախնդիրների վերլուծությունն ու գնահատումն է, տարաբնակեցման զարգացման ուղիների մատնանշումը:

Հետազոտության տեսական ու մեթոդաբանական հիմքը, վիճակագրական և տեղեկատվական սկզբնաղբյուրները: Աշխատանքի համար տեսական ու մեթոդաբանական հիմք են հանդիսացել տարաբնակեցման վերաբերյալ արտասահմանյան և հայ գիտնականների աշխատանքները, առկա տեսական գաղափարներն ու մեթոդաբանական մոտեցումները:

Ատենախոսության համար վիճակագրական սկզբնաղբյուրներ են ծառայել «Населенные пункты и населенеие Армянской ССР за 1831-1959 годы», Ереван 1962г. վիճակագրական ժողովածուն, ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից ՀՀ բնակչության ու բնակավայրերի վերաբերյալ հրապարակված ամենամյա տեղեկատուները, 2001 և 2011թթ-ի մարդահամարների պաշտոնական վիճակագրական տվյալները, տարբեր տարեթվերի «ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով» և «ՀՀ ժողովրդագրական ժողովածուներ»-ում առկա համապատասխան վիճակագրական տվյալները, ՀՀ համայնքների (բնակավայրերի) վարչական տարածքների և հողային ֆոնդի վերաբերյալ Կադաստրի պետական կոմիտեի տվյալները, ՀՀ կառավարության կողմից սահմանամերձ, լեռնային և բարձր լեռնային բնակավայրերի վերաբերյալ համապատասխան որոշումները, ինչպես նաև մեր կողմից կատարված դաշտային հետազոտությունների միջոցով ձեռք բերված նյութերն ու կատարված մշակումների արդյունքները: Հետազոտության ընթացքում կիրառվել են համեմատական-աշխարհագրական, վիճակագրական, քարտեզագրական, մաթեմատիկական մեթոդները, համալիրային, տիպաբանական և հիմնախնդրային մոտեցումները:

Պաշտպանվող հիմնադրույթները

1) Հիմնավորվել է ՀՀ սահմանամերձ, լեռնային և բարձր լեռնային տարածքների տարաբնակեցման աշխարհագրական հետազոտության հիմնահարցերի շրջանակը.
2) բացահայտվել է, որ ՀՀ լեռնային, բարձր լեռնային և սահմանամերձ տարածքներն առանձնանում են տարածքի բնակեցվածության, բնակչության ու բնակավայրերի տեղաբաշխման, բնակավայրերի մարդաքանակի տարածքային առանձնահատկություններով և բնորոշ գծերով,
3) հաստատվել է, որ ՀՀ մարզերի և տարածաշրջանների սահմանամերձ, լեռնային և բարձր լեռնային գյուղական տարածքներն առանձնանում են տարաբնակեցման տարածքային կառուցվածքի և տրանսպորտաաշխարհագրական դիրքի տարբերություններով և առանձնահատկություններով, որն արտահայտվում է տեղական կենտրոնից տրանսպորտային մատչելիության ցուցանիշներով,

4) հաստատվել է, որ վերջին տասնամյակներին ՀՀ սահմանամերձ, լեռնային և բարձր լեռնային տարածքներում տեղի ունեցած գործընթացների պատճառով առաջացել է նշված տարածքների և բնակավայրերի ժողովրդագրական իրավիճակի վատթարացում՝ գրեթե բոլոր տարածաշրջաններում և բնակավայրերում բնակչության թվաքանակի նվազում և բնակչության հիմնական տարիքային խմբերում՝ համամասնությունների խախտում,

5) հիմնավորվել է ՀՀ սահմանամերձ, լեռնային և բարձր լեռնային տարածքներում տարաբնակեցման տարածքային կառուցվածքի և վարչատարածքային բաժանման փոխներգործությունը:

Գիտական նորույթը.

- մշակվել է ՀՀ սահմանամերձ, լեռնային և բարձր լեռնային տարածքների տարաբնակեցման աշխարհագրական հետազոտության հիմնահարցերը,
- առաջին անգամ կատարվել է ՀՀ սահմանամերձ, լեռնային և բարձր լեռնային տարածքների տարաբնակեցման համալիր աշխարհագրական հետազոտություն և թեմատիկ քարտեզագրում,
- բացահայտվել են ՀՀ սահմանամերձ, լեռնային և բարձր լեռնային տարածքների տարաբնակեցման շարժընթացի միտումները, տարածաշրջանային տարբերություններն ու առկա հիմնախնդիրները,
- կատարվել է ՀՀ սահմանամերձ, լեռնային և բարձր լեռնային տարածքների գյուղական բնակավայրերի խմբավորում, որոնք միմյանցից տարբերվում են բնակչության տարիքային հիմնական խմբերի առկա կառուցվածքով, ժողովրդագրական իրավիճակի պատկերով և սոցիալ-տնտեսական զարգացման հնարավորություններով,
- առաջին անգամ կատարվել է ՀՀ սահմանամերձ, լեռնային և բարձր լեռնային տարածքներում վարչատարածքային բաժանման և տարաբնակեցման տարածքային կառուցվածքի միջև փոխազդեցության վերլուծություն և գնահատում:

Աշխատանքի կիրառական նշանակությունը: Հետազոտության մեթոդական մոտեցումները, ստացված փաստական նյութերը, վերլուծության արդյունքները կարող են օգտագործվել ՀՀ սահմանամերձ, լեռնային և բարձր լեռնային տարածքների տարաբնակեցման արդի վիճակը գնահատելու, համապատասխան տարածաշրջանային քաղաքականություն մշակելու և իրականացնելու համար: Այն կարող է օգտագործվել նաև այդպիսի տարածքների տարածքային զարգացման հայեցակարգերի մշակման, առանձին մարզերի, քաղաքների, համայնքների և բնակավայրերի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի մշակման աշխատանքներում, բուհական առանձին դասընթացների ուսումնական գործընթացներում:

Նախավիրձաքննությունը և հրատարակված աշխատանքները: Աշխատանքի տեսամեթոդական հարցերը, պաշտպանվող հիմնադրույթները, գիտական նորույթն ու եզրակացությունները զեկուցվել և քննարկվել են ԵՊՀ աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի գիտխորհրդում, սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի գիտական սեմինարներում: Ատենախոսության պաշտպանական հիմնադրույթների և ստացված արդյունքների վերաբերյալ զեկուցվել են «Հայաստանի Հանրապետության և մերձավոր արտասահմանի երկրների

տնտեսության զարգացման և տեղաբաշխման ժամանակակից հիմնախնդիրները» միջազգային մասնակցությամբ հանրապետական գիտաժողովում, ԵՊՀ ՈՒԳԸ 2017թ. և 2018թ. միջազգային 4-րդ և 5-րդ նստաշրջաններում: Ատենախոսության արդյունքները հրապարակվել են գիտական տասը հոդվածներում:

Աշխատանքի համառոտ բովանդակությունը

ԳԼՈՒԽ 1. ՀՀ ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ, ԼԵՌՆԱՅԻՆ ԵՎ ԲԱՐՁՐ ԼԵՌՆԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԸ

Այս գլխում վերլուծվել և ընդհանրացվել է տարաբնակեցման վերաբերյալ արտասահմանյան և հայ հեղինակների կողմից մշակված տարաբնակեցման էության, դերի, նշանակության, ինչպես նաև հետազոտման տեսամեթոդական հարցերը: Մեր կարծիքով տարաբնակեցումը պատմական զարգացման ընթացքում բնակչության տարածական բաշխման շնորհիվ ձևավորված բնակավայրերի տարածքային կազմակերպման ձև և գործընթաց է՝ բնակավայրերի որոշակի ենթակարգվածությամբ ու միջբնակավայրային բազմաբնույթ կապերով:

ՀՀ սահմանմերձ, լեռնային և բարձր լեռնային տարածքների տարաբնակեցման առանձին հարցերի քննարկմանն են նվիրված Հ. Գրգեարյանի, Գ. Ավագյանի, Մ. Ադոնցի, Ն. Մանասերյանի, Մ. Քոթանյանի, Խ. Ավետիսյանի, Ռ. Մարգարյանի, Մ. Մանասյանի, Ա. Պոտոսյանի, Վ. Մանասյանի և այլոց աշխատանքները:

ՀՀ սահմանամերձ, լեռնային և բարձր լեռնային տարածքների տարաբնակեցման աշխարհագրական հետազոտության կարևոր հարցերից են.

ա) բնակեցվածության, բնակչության ու բնակավայրերի տեղաբաշխման համաչափության, կենտրոնականի հանդեպ բնակչության ու բնակավայրերի ցրվածության և բնակավայրերի մարդաքանակի առանձնահատկությունների վերլուծությունն ու գնահատումը,

բ) տարաբնակեցման տարածքային կառուցվածքի ուսումնասիրությունը, մասնավորապես՝ բնակավայրերի տրանսպորտաաշխարհագրական դիրքի վերլուծությունը և գնահատումը,

գ) տարաբնակեցման շարժընթացի, գյուղական բնակավայրերի բնակչության տարիքային հիմնական խմբերի կառուցվածքի վերլուծությունը, հիմնախնդիրների բացահայտումը և գնահատումը,

դ) տարաբնակեցման տարածքային կառուցվածքի և վարչատարածքային բաժանման փոխազդեցության ուսումնասիրությունը,

ե) տարաբնակեցման զարգացման ուղիների մատնանշումը:

ԳԼՈՒԽ 2. ՀՀ ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ, ԼԵՌՆԱՅԻՆ ԵՎ ԲԱՐՁՐ ԼԵՌՆԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ՀԵՆՔԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Առաջին պարագրաֆում տրվում է «Լեռնային տարածքներ»-ի վերաբերյալ առկա կարծիքներն ու մոտեցումները, այնուհետև ՀՀ բնակավայրերն ըստ բարձունքային նիշերի դասակարգելու վերաբերյալ կառավարության 1998թ. որոշման բովանդակությունը և այդպիսի տարածքների հակիրճ բնութագիրը:

Երկրորդ պարագրաֆում տրվում է «սահմանամերձ» տարածքների մեկնաբանությունն ըստ ՀՀ պետական սահմանի մասին օրենքի 9-րդ հոդվածի, այնուհետև՝ հանրապետության սահմանամերձ տարածքների հակիրճ բնութագիրը:





Քարտեզ 1, 2.ՀՀ լեռնային, բարձր լեռնային և սահմանամերձ բնակավայրերի վարչական տարածքները:

Երրորդ պարագրաֆում քննարկվել է ՀՀ սահմանամերձ, լեռնային, և բարձր լեռնային բնակավայրերի ձևավորման գործընթացը: Հաստատվել է, որ 1831-1926թթ. ընթացում տեղի ունեցած գործընթացների շնորհիվ հիմնական գծերով ձևավորվել է ՀՀ սահմանամերձ, լեռնային և բարձր լեռնային տարածքների ժամանակակից տարաբնակեցման հենքը: Թեև հետագա տասնամյակների ընթացքում տեղի են ունեցել որոշակի փոփոխություններ, սակայն ՀՀ նշված տարածքներում տարաբնակեցման հենքը էական փոփոխություններ չի կրել:

ԳԼՈՒԽ 3. ՀՀ ԼԵՌՆԱՅԻՆ ԵՎ ԲԱՐՁՐ ԼԵՌՆԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Առաջին պարագրաֆում կատարվել է ՀՀ լեռնային և բարձր լեռնային տարածքների բնակչության ու բնակավայրերի տեղաբաշխման վերլուծություն, բացահայտվել է վերջիններիս տեղաբաշխման տարածքային տարբերությունները և բնորոշ գծերը: Ըստ այդմ՝ լեռնային և բարձր լեռնային տարածքներում.

1) բնակչության և բնակավայրերի տեղաբաշխումն առանձնանում է տարածքային խիստ անհամամասնությամբ: Բնակավայրերի 66 և բնակչության 73%-ը բաժին է ընկնում Գեղարքունիքի, Շիրակի և Արագածոտնի մարզերին, իսկ Սյունիքին և Վայոց ձորին, որոնք զբաղեցնում են ՀՀ նմանատիպ տարածքների 24,9%-ը, բնակավայրերի՝ 17,3, բնակչության ընդամենը՝ 6,7%-ը,

2) առկա է ոչ միայն բնակչության և բնակավայրերի տեղաբաշխման, այլ նաև բնակեցվածության զգալիորեն մեծ տարբերություններ: Բնակեցվածության աստիճանն առավել բարձր է Գեղարքունիքի, Կոտայքի, Արագածոտնի և Շիրակի մարզերում, մնացած մարզերում՝ զգալիորեն ցածր:

Երկրորդ պարագրաֆում տրվել է լեռնային և բարձր լեռնային տարածքներում գյուղերի մարդաքանակի տարածաշրջանային տարբերությունները և ըստ մարդաքանակի գյուղական բնակչության բևեռացվածությունը: Կատարվել է գյուղական բնակավայրերի բացարձակ բարձրության, մշակելի հողատարածքների մեծությունների, տեղական կենտրոնից ունեցած տարածական և ժամանակային հեռավորությունների և գյուղերի մարդաքանակի միջև գծային կոռելյացիայի կապի վերլուծություն՝ օգտվելով Պիրսոնի բանաձևից.

$$r=\frac{\sum(x-\bar{x})(y-\bar{y})}{\sqrt{\sum(x-\bar{x})^2\sum(y-\bar{y})^2}},$$

որտեղ x-ը և y-ը ուսումնասիրվող մեծությունների շարքի անդամներն են, իսկ $\bar{x}$ և $\bar{y}$ մեծությունները տվյալ շարքերի միջիններն են:

Վերջին՝ 3-րդ պարագրաֆում տրված է լեռնային և բարձր լեռնային տարածքների տարաբնակեցման տարածքային կառուցվածքի վերլուծությունը (աղ. 1): Բնակավայրերի ցանցի բնութագրման համար կիրառվել է բնակավայրերի տեղաբաշխման ինդեքսի ցուցանիշը, որը հաշվարկվում է $R_n=2\bar{D}\sqrt{N/A}$ բանաձևով որտեղ $\bar{D}$-ն մոտակա հարևան բնակավայրերի միջև միջին հեռավորությունն է, N-ը՝ բնակավայրերի թիվը, A-ն՝ դիտարկվող տարածքի մակերեսը [աղ. 1]:

Տեղական կենտրոնից բնակավայրերի ցրվածությունը գնահատելու համար կիրառվել է դինամիկ շառավղի ցուցանիշը, որը որոշվում է $r=\sqrt{[\sum(pd^2)]/P}$ բանաձևով, որտեղ r-ը դինամիկ շառավիղն է, p-ն՝ բնակավայրի մարդաքանակը, d-ն՝ կենտրոնականից մյուս բնակավայրեր հեռավորությունը, P-ն՝ բնակչության ընդհանուր թիվը: Տեղական կենտրոնից մինչև r կմ հեռավորության սահմաններում ապրող բնակչության մասնաբաժինը բնութագրում է ինչպես բնակչության, այնպես էլ բնակավայրերի կենտրոնացվածության աստիճանը [աղ. 1]: Կատարվել է նաև բնակչության տեղաբաշխման վերլուծություն ըստ բնակավայրերի տեղական կենտրոնից տրանսպորտային մատչելիության գոտիների, առանձնացվել է այդպիսի երեք գոտի՝ մինչև 15, 16-25 և 25 րոպեից ավելի տրանսպորտային մատչելիության սահմաններով [գծ. 1]:

Աղյուսակ 1

ՀՀ լեռնային և բարձր լեռնային տարածաշրջաններում բնակավայրերի տեղաբաշխման ինդեքսի և տեղական կենտրոնից բնակավայրերի ցրվածության դինամիկ շառավղի ցուցանիշները

Տարածաշրջանները	Բնակավայրերի տեղաբաշխման ինդեքսը	Դինամիկ շառավղի (կմ)	Դինամիկ շառավղի սահմաններում տեղաբաշխված բնակչության թվի բաժինը (%)	Դինամիկ շառավղի սահմաններում տեղաբաշխված բնակավայրերի թվի բաժինը (%)
Ապարանի	1,16	13	66,6	63
Թալինի	1,25	13	72,8	55
Արագածի	1,45	12	58,1	52
Սևանի	1,23	12	55,6	67
Գավառի	0,96	13	90,3	82
Ճամբարակի	1,61	18	64,8	67
Մարտունու	0,56	12	68,4	65
Վարդենիսի	1,24	13	70,2	51
Սպիտակի	0,91	15	63,5	56
Հրազդանի	1,06	13	68,6	54
Ամասիայի	1,35	16	57,2	57
Աշոցքի	1,31	13	66	54
Արթիկի	0,71	8	63,1	62
Սիսիանի	0,99	17	68,2	56



Գծապատկեր 1. ՀՀ լեռնային տարածաշրջաններում բնակչության տեղաբաշխումն (%) ըստ տեղական կենտրոնից տրանսպորտային մատչելիության գոտիների

Պարզվել է որ.

1. ըստ բնակավայրերի տեղաբաշխման ինդեքսի ցուցանիշների ՀՀ լեռնային ու բարձր բնակավայրերն առավել համաչափ տեղաբաշխված են Ճամբարակի և Արագածի, առավել կենտրոնացված՝ Մարտունու և Արթիկի տարածաշրջաններում,

2. ՀՀ լեռնային և բարձր լեռնային բոլոր տարածաշրջաններում բնակչության ավելի մեծ բաժինն ապրում է դինամիկ շառավղի սահմաններում, նկատելիորեն ավելի մեծ կենտրոնացվածությամբ առանձնանում է Գավառի տարածաշրջանը: Դինամիկ շառավղի առավել մեծ ցուցանիշով աչքի են ընկնում Ճամբարակի, Սիսիանի, Ամասիայի տարածաշրջանները, առավել փոքր՝ Արթիկի տարածաշրջանը,

3. բարձր լեռնային գյուղական բնակավայրերի տեղական կենտրոնից տրանսպորտային միջին մատչելիության առավել բարձր ցուցանիշներով աչքի են ընկնում Սիսիանի և Ամասիայի տարածաշրջանները: Դրանցում տեղական կենտրոնից 25 րոպեից ավելի տրանսպորտային մատչելիության գոտում գտնվում են բնակավայրերի թվի 44 և 54,5%-ը, բնակչության թվի՝ 25,6 և 58,9%-ը:



Քարտեզ 3. ՀՀ լեռնային և բարձր լեռնային գյուղերի մարդաքանակը և տրանսպորտային մատչելիությունը տեղական կենտրոնից



Քարտեզ 4. ՀՀ լեռնային և բարձր լեռնային փակուղային դիրք ունեցող գյուղերը

ԳԼՈՒԽ 4. ՀՀ ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Առաջին պարագրաֆում վեր են հանվել բնակչության ու բնակավայրերի խտության տարածաշրջանային առանձնահատկություններն ու բնորոշ գծերը, վերջիններիս բաշխվածությունն ըստ ծովի մակարդակից ունեցած բարձրության գոտիների: Պարզվել է, որ.

1. բնակչության ու բնակավայրերի կենտրոնացվածության առավել բարձր մակարդակով առանձնանում են Սյունիքի և Տավուշի, ցածր՝ Արագածոտնի և Լոռու մարզերը: Դրանց կենտրոնացվածության աստիճանն առավել մեծ է Ադրբեջանի, ցածր՝ Վրաստանի հետ սահմանամերձ գոտում,

2. սահմանամերձ տարածքներում բնակչության խտության ցուցանիշն զգալիորեն փոքր է ՀՀ միջինից (բացառությամբ Արմավիրի մարզի), բնակեցվածության նշանակալից տարբերություններ կան ընդհանուր տարածքի, գյուղատնտեսական հողատարածքների և վարելահողերի հաշվով, գյուղական բնակավայրերի խտության ցուցանիշը մոտ է ՀՀ միջինին,

3. թեև սահմանամերձ գոտում բնակավայրեր կան ՀՀ բնակեցված տարածքի բարձրության բոլոր գոտիներում, սակայն գյուղական բնակավայրերի և բնակչության հիմնական մասը տեղաբաշխված են մինչև 1500 մ բարձրության գոտում:

Երկրորդ պարագրաֆում տրվել է ՀՀ սահմանամերձ տարածքների բնակավայրերի, մասնավորապես՝ գյուղական բնակավայրերի մարդաքանակի տարածաշրջանային առանձնահատկությունները և առկա հիմնախնդիրները: Պարզվել է, որ.

1. ՀՀ սահմանամերձ տարածքներն ունեն գյուղերի մարդաքանակի և ըստ մարդաքանակի գյուղական բնակչության բաշխվածության խիստ բևեռացվածություն, սահմանամերձ տարածքներին բնորոշ է մեծ, միջին և խոշոր գյուղային տարաբնակեցումը: Բնակավայրերի այդ խմբին բաժին է ընկնում ՀՀ սահմանամերձ գոտու գյուղերի ընդհանուր թվի 47,6 և գյուղական բնակչության 87%-ից ավելին,

2. առկա է գյուղական բնակավայրերի միջին մարդաքանակի տարածաշրջանային մեծ տարբերություններ, գյուղական բնակավայրերի միջին մարդաքանակի՝ ծովի մակարդակից ունեցած բարձրության փոփոխման համեմատ որոշակի օրինաչափություն չկա,

3. բացառությամբ Շիրակի մարզի, ՀՀ սահմանամերձ մնացած տարածքներում գյուղական բնակավայրերի մարդաքանակն ուղիղ համեմատական կախվածություն ունի մշակելի հողատարածքների մեծությունից, ինչը նշանակում է, որ այդպիսի տարածքներում գյուղական բնակավայրերի սոցիալ-տնտեսական զարգացումը պայմանավորված է նախ և առաջ մշակելի հողատարածքների արդյունավետ օգտագործումից,

4. սահմանամերձ տարածքներում գյուղերի մարդաքանակի և դրանց ծովի մակարդակից ունեցած բարձրության, մշակելի հողատարածքների մեծությունների, տեղական կենտրոնից տարածական ու տրանսպորտային մատչելիության մեծությունների միջև առկա են կոռելյացիոն կապի ցուցանիշների տարածաշրջանային տարբերություններ: Դա հիմք է տալիս գյուղական տարածքների ու առանձին բնակավայրերի սոցիալ-տնտեսական զարգացման տարաբնույթ խնդիրների լուծման համար իրականացնել տարբերակված տարածաշրջանային քաղաքականություն:

Երրորդ պարագրաֆում քննարկվել են սահմանամերձ տարածքների տարաբնակեցման տարածքային կառուցվածքին վերաբերվող հարցեր: Տրվել է բնակավայրերի տրանսպորտաաշխարհագրական դիրքի վերլուծություն: Առանձնակի կարևորվել է Սյունիքի և Տավուշի մարզերի սահմանամերձ գյուղերի խմբավորումն ըստ տեղական կենտրոնից ունեցած տրանսպորտային մատչելիության:

Աղյուսակ 2

Սյունիքի և Տավուշի մարզերի սահմանամերձ գյուղերի խմբավորումն ըստ տեղական կենտրոնից ունեցած տրանսպորտային մատչելիության

		Տրանսպորտային մատչելիությունը(րոպե)					
Մարզեր	Տարածաշրջանները	մինչև 15 ր.		16-25ր		25ր-ից ավելի	
		ա	բ	ա	բ	ա	բ
Սյունիք	Կապանի	9	2264	6	897	20	2935
	Գորիսի	1	1348	7	9113	8	3337
	Սիսիանի	0	0	1	290	7	1803
	Մեղրու	5	1053	6	845	2	225
Տավուշ	Նոյեմբերյանի	4	8863	2	2242	7	7528
	Տավուշի	3	3756	5	4589	8	11427
	Իջևանի	3	3028	8	14374	5	2203

ա՝ գյուղերի թիվը, բ՝ բնակչության թիվը



Քարտեզ 5. ՀՀ սահմանամերձ գյուղերի մարդաքանակը և տրանսպորտային մատչելիությունը տեղական կենտրոնից



Քարտեզ 4. ՀՀ սահմանամերձ փակուղային դիրք ունեցող գյուղերը:

Պարզվել է, որ սահմանամերձ 191 գյուղական բնակավայրերից 50%-ից ավելին գտնվում են տեղական կենտրոնից 25ր-ից ավելի տրանսպորտային մատչելիության գոտում, 16-25 րոպե մատչելիության գոտում է տեղաբաշխված գյուղերի 32 և բնակչության 43%-ից ավելին, իսկ մինչև 15 րոպե մատչելիության սահմաններում՝ գյուղերի 17,3 և բնակչության 19%-ը:

ՀՀ սահմանամերձ տարածքներում մշտական բնակչություն ունեցող 93 գյուղական բնակավայր ունի փակուղային դիրք: Դրանց գրեթե կեսը (46 բնակավայր) գտնվում են Սյունիքի մարզում, որոնց միջին մարդաքանակը (239 մարդ) գրեթե 100-ով փոքր է մարզի սահմանամերձ գյուղերի միջին մարդաքանակից: Մարզի փակուղային

դիրք ունեցող գյուղերից 18-ի բնակչության թիվը պակաս է 100-ից: Ընդհանուր առմամբ վերջին երեք տասնամյակների ընթացքում ՀՀ սահմանամերձ տարածքներում բնազրկվել են 6 փակուղային դիրք ունեցող գյուղական բնակավայր:

ԳԼՈՒԽ 5. ՀՀ ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ, ԼԵՌՆԱՅԻՆ ԵՎ ԲԱՐՁՐ ԼԵՌՆԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Առաջին ենթագլխում տրված է վերջին 30 տարվա (1988-2018թթ.) ընթացքում ՀՀ սահմանամերձ տարածքներում տարաբնակեցման շարժընթացի վերլուծություն և գնահատում:Պարզվել է, որ.

1. ՀՀ սահմանամերձ (բացի Արարատի և Արմավիրի մարզերից) տարածքներում տեղի է ունեցել ինչպես մշտական, այնպես էլ առկա բնակչության բացարձակ թվաքանակի նվազում,
2. ռազմավարական նշանակություն ունեցող Գեղարքունիքի, Սյունիքի և Վայոց ձորի մարզերում միասին վերցրած բնակչության բացարձակ թիվը նվազել է ավելի քան 35,6 հազարով կամ 14,6%-ով,
3. մի կողմից տեղի է ունեցել 1001-2000 մարդ ունեցող գյուղերի թվի նվազում, մյուս կողմից՝ մինչև 100 մարդ ունեցող գյուղերի թվի ավելացում: Գյուղական տարաբնակեցման մեջ առանցքային նշանակություն ունեցող բնակավայրերի (1000-ից ավելի մարդ) խմբում բնակչության բացարձակ թիվը նվազել է ավելի քան 20%-ով,
4. ՀՀ սահմանամերձ տարածքներում տարաբնակեցման շարժընթացի առկա միտումները և դրանց պահպանումը կարող են առաջացնել տնտեսական, սոցիալական, ժողովրդագրական և այլ բնույթի հիմնախնդիրներ:

«Տարաբնակեցման շարժընթացը և առկա հիմնախնդիրները լեռնային և բարձր լեռնային տարածքներում» ենթագլխում կատարված վերլուծությունը և ստացված արդյունքների ամփոփումն ու ընդհանրացումը ցույց է տալիս, որ.

1) տեղի է ունեցել բնակչության թվաքանակի կայուն կերպով նվազում,բացառությամբ Արագածոտնի և Արարատի մնացած բոլոր մարզերում նշված ժամանակա-հատվածում տեղի է ունեցել բնակչության թվի նվազում: Բացի Շիրակից, 2001-2011թթ. միջմարդահամարային ժամանակահատվածում ՀՀ բոլոր մարզերի լեռնային և բարձր լեռնային տարածքների բնակչության առկա թիվը նվազել է,
2) բնակչության թվաքանակի նվազումն առավել մեծ տեմպերով տեղի է ունեցել քաղաքային բնակչության շրջանում: Բացարձակ թվով այն առավել մեծ չափով նվազել է Գեղարքունիքի և Կոտայքի մարզերում, իսկ տոկոսային մեծությամբ՝ Վայոց ձորում,
3) թեև Արագածոտնի, Արարատի և Կոտայքի մարզերում նշված ժամանակահատվա-ծում դիտվել է գյուղական բնակչության թվաքանակի որոշակի աճ, սակայն ՀՀ մասշտաբով նշված տարածքների գյուղական բնակչության թիվը կայուն կերպով նվազել է: Առավել նկատելի է Վայոց ձորի մարզի գյուղական բնակչության թվի նվազումը շուրջ 40%-ով,
4) տեղի է ունեցել մանր, փոքր, միջին և մեծ գյուղերի միջին մարդաքանակի նվազման գործընթաց, որը մինչև 2000 մարդ ունեցող գյուղերի համար միջին հաշվով կազմել է մոտ 100 մարդ,

5) ավելացել է գերխոշոր (5000 մարդուց ավելի) գյուղերի թիվը և դրանց բնակչության մասնաբաժինը նշված տարածքների գյուղական բնակչության մեջ, որի հետևանքով մեծացել է բնակչության բաշխման տարբերությունն ըստ մարդաքանակի գյուղական բնակավայրերի տարբեր խմբերի միջև,
6) բացի 1801-2000մ բարձրության գոտու, մնացած երկու գոտիներում տեղի է ունեցել գյուղական բնակչության բացարձակ թվի նվազում: Առավել նկատելի է 2000մ-ից բարձր գոտում գյուղական բնակչության թվաքանակի նվազումը, որը 1988-2011թթ. կազմել է ավելի քան 21հզ. մարդ:

Քարտեզ 7. ՀՀ լեռնային և բարձր լեռնային գյուղերի խմբավորումն ըստ բնակչության տարիքային հիմնական խմբերի



Երրորդ ենթագլխում կատարված հետազոտության արդյունքների ընդհանրացումը ցույց է տալիս, որ.

ՀՀ լեռնային և բարձր լեռնային գյուղական բնակավայրերի բնակչության տարիքային հիմնական խմբերի կառուցվածքով առավել խոցելի են բնակչության թվաքանակով ոչ մեծ (մինչև 1000 մարդ ունեցող) բնակավայրերը, որոնք տարիքային կառուցվածքի նման իրավիճակի պահպանման և վատթարացման պայմաններում կարող են ունենալ սոցիալ-տնտեսական լուրջ հիմնախնդիրներ և հայտնվել բնազրկման վտանգի առջև:

«Սահմանամերձ տարածքներում գյուղական բնակչության տարիքային կառուցվածքի տարածաշրջանային առանձնահատկությունները և հիմնախնդիրները» ենթագլխում վերլուծության արդյունքների ընդհանրացումը ցույց է տալիս, որ նախկին 175 գյուղական համայնքներից 88-ն ունեն անբավարար, անբերանպաստ և առավել անբարենպաստ տարիքային կառուցվածք, դրանցից 60-ը՝ անբարենպաստ և առավել անբարենպաստ: Այդպիսի գյուղերն առավել մեծ թիվ են կազմում Սյունիքի (41), Տավուշի (24),Գեղարքունիքի (11) և Վայոց ձորի (9) մարզերում, որոնք բոլորն էլ սահմանակից են Ադրբեջանին: Առավել տագնապալի պետք է համարել Սյունիքի մարզի սահմանամերձ գյուղերի բնակչության տարիքային կառուցվածքի առկա իրավիճակը՝ հաշվի առնելով նաև տարածաշրջանում գյուղերի փոքր միջին մարդաքանակը:



Քարտեզ 8, 9. Արագածոտնի և Գեղարքունիքի մարզերի լեռնային և բարձր լեռնային տարածքներում խոշորացված համայնքների փոփոխման առաջարկվող սխեմա



Քարտեզ 10, 11. Շիրակի լեռնային և բարձր լեռնային, Տավուշի սահմանամերձ տարածքներում խոշորացված համայնքների փոփոխման առաջարկվող սխեմա

Վերջին՝ 5-րդ ենգալխում քննարկվել են ՀՀ սահմանամերձ, լեռնային և բարձր լեռնային տարածքներում համայնքների խոշորացման (վարչատարածքային բաժանման փոփոխությունների) և տարաբնակեցման փոխառնչությունների խնդիրները: Կատարված հետազոտության հիման վրա պարզվել է, որ.

1) ՀՀ սահմանամերձ, լեռնային և բարձր լեռնային տարածքների սոցիալ-տնտեսական զարգացումը, այդպիսի տարածքներում տեղական ինքնակառավարման իրականացումը և տարածքային կազմակերպումը ի թիվս այլ գործոնների պայմանավորված է նաև տարաբնակեցման բնույթով՝ վերջինիս տարածքային կառուցվածքով, գյուղական բնակավայրերի տրանսպորտաաշխարհագրական դիրքով, մարդաքանակով, տարաբնակեցման ցանցում դրանց տեղադիրքի այլ առանձնահատկություններով,

2) Վերջին տարիներին հանրապետության սահմանամերձ, լեռնային և բարձր լեռնային տարածքներում իրականացված համայնքների խոշորացման գործընթացն իրականացնելիս մի շարք դեպքերում անտեսվել են տարածքի տարաբնակեցման առանձնահատկությունները: Ձևավորված համայնքները ոչ բոլոր դեպքերում կարող են իրականացնել արդյունավետ տեղական ինքնակառավարում, տարատեսակ ծառայությունների մատուցման տարածքային կազմակերպում:

Մեր կողմից կատարվել է հանրապետության սահմանամերձ, լեռնային և բարձր լեռնային տարածքներում խոշորացված համայնքների վարչատարածքային բաժանման սխեմայի փոփոխման հիմնավորում:

Եզրակացություններ

1. ՀՀ սահմանամերձ, լեռնային և բարձր լեռնային տարածքների տարաբնակեցման համալիր աշխարհագրական հետազոտությունը հնարավորություն է տալիս բացահայտել տարաբնակեցման արդի վիճակի առանձնահատկություններն ու բնորոշ գծերը, պարզել զարգացման գործընթացներում առկա միտումներն ու հիմնախնդիրները, մատնանշել զարգացման ուղիները:

2. Սահմանամերձ, լեռնային և բարձր լեռնային տարածքների տարաբնակեցման աշխարհագրական հետազոտության կարևոր խնդիրներից են բնակեցվածության, բնակչության ու բնակավայրերի տեղաբաշխման համաչափության, բնակավայրերի ցրվածության, մարդաքանակի, տարաբնակեցման տարածքային կառուցվածքի, բնակավայրերի տրանսպորտաաշխարհագրական դիրքի, գյուղական բնակավայրերի բնակչության տարիքային հիմնական խմբերի կառուցվածքի, տարաբնակեցման տարածքային կառուցվածքի և վարչատարածքային բաժանման փոխազդեցությունների, տարաբնակեցման շարժընթացի և առկա հիմնախնդիրների վերլուծությունը, գնահատումը և տարաբնակեցման զարգացման ուղիների մատնանշումը:

3. ՀՀ սահմանամերձ, լեռնային և բարձր լեռնային տարածքների ժամանակակից տարաբնակեցման հենքը հիմնական գծերով ձևավորվել է շուրջ մեկդարյա (1830-ական թթ. - 1920-ական թթ.) ժամանակահատվածում տեղի ունեցած պատմական իրադարձությունների, ժողովրդագրական և սոցիալ-տնտեսական գործընթացների շնորհիվ: Հետագա տասնամյակների ընթացքում տեղի ունեցած տարաբնույթ գործընթացներն իրենց անմիջական և միջնորդավորված ազդեցությունն են թողել նշված տարածքների տարաբնակեցման վրա:

4. ՀՀ լեռնային և բարձր լեռնային տարածքներն առանձնանում են բնակչության ու բնակավայրերի տեղաբաշխման տարածքային խիստ անհամաչափությամբ, բնակեցվածության ցուցանիշների և բնակավայրերի մարդաքանակի զգալիորեն մեծ տարբերություններով, ըստ գերակշռող մարդաքանակի գյուղական բնակչության

բաշխվածության բևեռացմամբ, ըստ մարդաքանակի գյուղական բնակավայրերի տեղաբաշխման տարածաշրջանային մեծ տարբերություններով:

5. ՀՀ լեռնային տարածաշրջաններում գյուղական բնակավայրերի մարդաքանակը կոռելյացիոն ամենամեծ կապն ունի մշակելի հողատարածքների մեծության հետ, որն առավել ուժեղ է արտահայտված Թալինի, Սիսիանի, Աշոցքի, Հրազդանի, Սևանի և Գավառի տարածաշրջաններում: Բնակավայրերի մարդաքանակի և բացարձակ բարձրության միջև կոռելյացիոն կապն առավել մեծ է Ամասիայի, համեմատաբար ավելի փոքր՝ Վարդենիսի, Մարտունու, Հրազդանի և Թալինի տարածաշրջաններում: Տեղական կենտրոնից հեռավորության և գյուղերի մարդաքանակի միջև նկատելի կոռելյացիա կա Թալինի, Աշոցքի և Վարդենիսի տարածաշրջաններում, առավել ուժեղ կոռելյացիա՝ Գավառի տարածաշրջանում:

6. ՀՀ լեռնային և բարձր լեռնային տարածքներում բնակավայրերի տեղաբաշխման ինդեքսի ցուցանիշները բավական մեծ կոնտրաստ ունեն: Գյուղական բնակավայրերն առավել համաչափ տեղաբաշխված են Ճամբարակի և Արագածի, առավել կենտրոնացված՝ Մարտունու և Արթիկի տարածաշրջաններում:

7. ՀՀ բոլոր լեռնային տարածաշրջաններում բնակչության ավելի մեծ բաժինն ապրում է դինամիկ շառավղի սահմաններում: Բնակչության նկատելիորեն ավելի մեծ կենտրոնացվածությամբ առանձնանում է Գավառի տարածաշրջանը: Այդ ցուցանիշը մեծ է նաև Ճամբարակի, Սիսիանի և Ամասիայի տարածաշրջաններում, փոքր՝ Արթիկում: Գյուղական բնակավայրերի տեղական կենտրոնից տրանսպորտային մատչելիության ժամանակային և տարածական առավել անբարենպաստ ցուցանիշներ ունեն Սիսիանի և Ամասիայի տարածաշրջանները:

8. ՀՀ սահմանամերձ տարածքներն ունեն բնակեցվածության ցուցանիշների տարածաշրջանային զգալի տարբերություններ: Բացառությամբ Արմավիրի, մնացած մարզերի սահմանամերձ տարածքներում բնակչության խտությունն ընդհանուր տարածքի հաշվով զգալիորեն փոքր է ՀՀ համապատասխան միջին ցուցանիշից: Նշված տարածքներում գյուղական բնակչության և բնակավայրերի հիմնական մասը տեղաբաշխված են մինչև 1500մ բարձրության գոտում:

9. Բացառությամբ Շիրակի, ՀՀ սահմանամերձ մնացած տարածքներում գյուղական բնակավայրերի մարդաքանակն ուղիղ համեմատական կախվածություն ունի մշակելի հողատարածքների մեծությունից: Գյուղերի մարդաքանակի փոփոխությունն ըստ ծովի մակարդակից ունեցած բարձրության միանշանակ չէ՝ մարզերի մեծ մասում այն համապատասխանում է գոյություն ունեցող օրինաչափությանը, իսկ Տավուշի և Սյունիքի մարզերում կոռելյացիան բացակայում է:

10. Սահմանամերձ տարածքներում գյուղերի մարդաքանակի և տարբեր գործոնների միջև կոռելյացիոն կապի ցուցանիշների տարածաշրջանային տարբերությունները հիմք են տալիս գյուղական տարածքների ու առանձին բնակավայրերի սոցիալ-տնտեսական զարգացման տարաբնույթ խնդիրների լուծման համար իրականացնել տարբերակված տարածաշրջանային քաղաքականություն:

11. ՀՀ սահմանամերձ տարածքներն առանձնանում են տարաբնակեցման տարածքային կառուցվածքի և գյուղական բնակավայրերի տրանսպորտա-աշխարհագրական դիրքի տարբերություններով ու առանձնահատկություններով:

Դրանք իրենց ազդեցությունն են թողնում սահմանամերձ տարածքների ու բնակավայրերի սոցիալ-տնտեսական զարգացման, վարչատարածքային բաժանման և տեղական ինքնակառավարման կազմակերպման գործընթացների վրա:

12. Վերջին երեք տասնամյակի ընթացքում բնակչության բացարձակ թվի նվազումն ընդգրկել է սահմանամերձ բոլոր մարզերը (բացառությամբ Արարատի և Արմավիրի), իսկ լեռնային ու բարձր լեռնային տարածքներում, բացառությամբ Արարատի և Արագածոտնի, մնացած բոլոր մարզերը: Տարաբնակեցման շարժընթացի առկա միտումների պահպանումը և հետագա խորացումը կարող են հանգեցնել ժողովրդագրական առումով անկայուն մանր ու փոքր գյուղերի բնակզրկման և աստիճանական վերացման, բնակեցված արեալի նվազման, տարածքային, գյուղատնտեսական և մարդկային ներուժի ոչ արդյունավետ օգտագործման:

13. ՀՀ լեռնային, բարձր լեռնային և սահմանամերձ գյուղական բնակավայրերից տարիքային հիմնական խմբերի բնակչության կառուցվածքով առավել խոցելի են բնակչության թվաքանակով ոչ մեծ (մինչև 1000, սահմանմերձ տարածքներում՝ մինչև 200 մարդ) գյուղերը, որոնք բնակչության տարիքային հիմնական խմբերի նման կառուցվածքի պահպանման և վատթարացման պայմաններում կարող են ունենալ սոցիալ-տնտեսական լուրջ հիմնախնդիրներ և հայտնվել բնազրկման վտանգի առջև:

14. ՀՀ սահմանամերձ, լեռնային և բարձր լեռնային տարածքներում առկա տարաբնակեցման տարածքային կառուցվածքը ոչ միշտ է նպաստում ներկայումս տեղական մակարդակում կատարվող վարչատարածքային բաժանման փոփոխություններին: Շատ դեպքերում նախկին շրջկենտրոններից առանձնացած, դրանց դինամիկ շառավղի սահմաններին մոտ կամ դուրս գտնվող և խոշորացվող համայնքների տեսլականին բավարարող մեծ (3000 մարդուց ավելի) գյուղական բնակավայրեր, որոնք տարաբնակեցման համակարգում կարող են հավակնել տեղային նոր կենտրոններ դառնալուն, բացակայում են:

Առաջարկություններ

- ՀՀ լեռնային, բարձր լեռնային և սահմանամերձ տարածքների սոցիալ-տնտեսական զարգացման համալիրային ծրագրերի մշակման գործընթացներում, ինչպես նաև վարչատարածքային բաժանման մեջ փոփոխություններ իրականացնելիս առաջնահերթ հաշվի առնել այդպիսի տարածքների տարաբնակեցման առանձնահատկությունները և զարգացման միտումները:
- ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությունում ստեղծել օղակ, որը կմշակի ՀՀ սահմանամերձ, լեռնային և բարձր լեռնային տարածքների տարաբնակեցման գործընթացներում տեղի ունեցող երևույթները և առաջարկություններ կներկայացնի այդպիսի տարածքներում տարաբնակեցումն արդյունավետ կազմակերպելու և կառավարելու համար:
- Հաշվի առնելով լեռնային, բարձր լեռնային և սահմանամերձ տարածքների տարաբնակեցման առանձնահատկությունները և շարժընթացի արդի միտումները, ՀՀ կառավարության, մարզային, տարածաշրջանային և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից պետք է մշակվեն և իրականացվեն այդպիսի տարածքների սոցիալ-տնտեսական առաջնահերթ ծրագրեր, որոնց շնորհիվ պայմաններ կստեղծվեն նշված տարածքներում բնակչության թվի նվազումը կանխելու, ռեսուրսային ներուժն

արդյունավետ օգտագործելու և երկրի պաշտպանունակությունն ամրապնդելու համար:

- ՀՀ կառավարության տարածաշրջանային և ժողովրդագրական քաղաքականության անհետաձգելի խնդիրներից մեկը պետք է դառնա օգտագործելով ֆինանսական, սոցիալական, հարկային և այլ լծակներ՝ սահմանամերձ, լեռնային և բարձր լեռնային բնակավայրերում ծնելիության մակարդակը բարձրացնելու և բնակչության առավել նպաստավոր տարիքային կառուցվածք ձևավորելու համար:
- Առանձնակի վերանայման կարիք ունի վերջին տարիներին ՀՀ-ում իրականացված վարչատարածքային բաժանման փոփոխությունները: Հաշվի առնելով սահմանամերձ, լեռնային և բարձր լեռնային տարածքների առանձնահատուկ պայմանները, բնակավայրերի աշխարհագրական դիրքի տեղաբաշխման բնույթը կենտրոնականի և միմյանց նկատմամբ, առավել նախընտրելի է համայնքների խոշորացման փնջային տարբերակը: Այն փոքր գյուղական բնակավայրերը, որոնք առանձնացած են բնակավայրերի ընդհանուր ցանցից, կենտրոնից գտնվում են խիստ անբարենպաստ տրանսպորտային մատչելիության գոտում, ունեն փակուղային դիրք, պետք է ունենան ինքնուրույն համայնքի կարգավիճակ և ստանան օրենքով կարգավորվող լրացուցիչ արտոնություններ և դոտացիաներ:

Հրատարակված աշխատանքների ցանկ.

1. Պոտոսյան Վ.Ա., ՀՀ սահմանամերձ տարածքներում տարաբնակեցման շարժընթացը և առկա հիմնախնդիրները, ԵՊՀ Գիտական տեղեկագիր. երկրաբանություն և աշխարհագրություն: 2017, 51 (2), էջ 135-142:
2. Պոտոսյան Վ.Ա., ՀՀ լեռնային և բարձր լեռնային տարածքներում տարաբնակեցման շարժընթացը եվ առկա հիմնախնդիրները, ԵՊՀ Գիտական տեղեկագիր. երկրաբանություն և աշխարհագրություն: 2017, 51(3), էջ 202-209:
3. Պոտոսյան Վ.Ա., Բնակչության տարիքային կառուցվածքի առանձնահատ-կությունները և առկա հիմնախնդիրները ՀՀ լեռնային և բարձրլեռնային գյուղական բնակավայրերում, ԵՊՀ ՈՒԳԸ գիտական հոդվածների ժողովածու 2018, 1.1 (24), բնակական և ֆիզիկամաթեմատիկական գիտություններ, էջ 54-65:
4. Պոտոսյան Վ.Ա., ՀՀ սահմանամերձ տարածքներում գյուղական բնակչության տարիքային կառուցվածքի տարածաշրջանային առանձնահատկությունները եվ հիմնախնդիրները, ԵՊՀ Գիտական տեղեկագիր. երկրաբանություն և աշխարհագրություն: 2018, 52 (1), էջ 41-46:
5. Պոտոսյան Վ.Ա., Բնակչության ու բնակավայրերի տեղաբաշխման և բնակավայրերի մարդաշատության առանձնահատկությունները ՀՀ լեռնային և բարձր լեռնային տարածքներում, Ակունք: Գիտական հոդվածների ժողովածու, Ե., 2018 (1), էջ 209-219:
6. Պոտոսյան Վ.Ա., ՀՀ սահմանամերձ գոտում գյուղական բնակավայրերի մարդաքանակի տարածաշրջանային առանձնահատկությունները և առկա հիմնախնդիրները, ԵՊՀ Գիտական տեղեկագիր. երկրաբանություն և աշխարհագրություն: 2018, 52 (2), էջ 118-124:

7. Պոտոսյան Վ.Ա., Տարաբնակեցման տարածքային կառուցվածքի և գյուղական բնակավայրերի մարդաքանակի առանձնահատկությունները և տարածքային տարբերությունները ՀՀ լեռնային և բարձր լեռնային տարածքներում, Ֆինանսներ և էկոնոմիկա 2018, 5-6 (213-214), էջ 155-161:
8. Պոտոսյան Վ.Ա., ՀՀ սահմանամերձ տարածքներում գյուղերի մարդաքանակի և գյուղական տարաբնակեցման տարածքային կառուցվածքի մի քանի հարցեր, ԵՊՀ Գիտական տեղեկագիր. երկրաբանություն և աշխարհագրություն: 2018, 52 (3), էջ 197-205:
9. Պոտոսյան Վ.Ա., Ավագյան Ա.Ռ., ՀՀ սահմանամերձ, լեռնային և բարձր լեռնային տարածքների տարաբնակեցման աշխարհագրական հետազոտման հիմնահարցերը, ԵՊՀ Գիտական տեղեկագիր. երկրաբանություն և աշխարհագրություն: 2018, 52 (3), էջ 206-214:
10. Պոտոսյան Ա. Հ., Պոտոսյան Վ.Ա., ՀՀ սահմանամերձ գոտու բնակեցվածության հարցի շուրջ, ԵՊՀ Գիտական տեղեկագիր. երկրաբանություն և աշխարհագրություն: 2018, 52 (2), էջ 109-117:

ПРОБЛЕМЫ РАЗВИТИЯ РАССЕЛЕНИЯ НА ПРИГРАНИЧНЫХ, ГОРНЫХ И ВЫСОКОГОРНЫХ ТЕРРИТОРИЯХ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

РЕЗЮМЕ

Цель исследования - выявление особенностей и характерных черт размещения населения и поселений, людности поселений, территориальной структуры расселения, а также проблем, обусловленных динамикой расселения, с указанием путей их решения в горных, высокогорных и приграничных районах (ГВПР) РА.

Научная новизна

- Разработаны ключевые вопросы географического исследования расселения в ГВПР РА.
- Впервые проведено комплексное географическое исследование и тематическое картографирование расселения в ГВПР РА.
- Выявлены тенденции динамики расселения, региональные различия и проблемы в ГВПР РА.
- Проведена группировка сельских поселений в ГВПР РА, отличающиеся структурой основных возрастных групп населения, демографической ситуацией и возможностями социально-экономического развития.
- Впервые проведен анализ и дана оценка взаимосвязи между административно-территориальным делением и территориальной структурой расселения ГВПР РА.

На основе полученных результатов исследования сделаны следующие основные выводы и заключения:

1. Комплексное географическое исследование ГВПР РА позволяет выявить особенности и характерные черты современного состояния расселения, выявить тенденции и проблемы процессов развития, указать пути их решения. 2. ГВПР РА характерно крайне неравномерное размещение населения и поселений, значительная разница между показателями заселенности и людности поселений. 3. Людность сельских поселений на вышеупомянутых территориях во многом зависит от размера обрабатываемых земель. 4. Показатели индекса размещения поселений в ГВПР имеют достаточно большую контрастность. Большая часть населения живет в пределах динамичного радиуса. ГВПР отличаются особенностями территориальной структуры расселения и транспортно-географическим положением сельских поселений. 5. За последние три десятилетия абсолютная численность населения сократилась во всех

приграничных марзах, кроме Араратского и Армавирского, а в горных и высокогорных районах - за исключением Араратского и Арагацотнского. 6. Сохранение и дальнейшее углубление негативных тенденций в динамике расселения на упомянутых территориях может привести к демографической деградации и постепенной ликвидации малых и небольших сел, сокращению ареала расселения, неэффективному использованию территориального, сельскохозяйственного и человеческого потенциала. 7. В ГВПР наиболее уязвимы небольшие по численности населения села (до 1000 человек, а в приграничных районах – до 200) ввиду особенностей структуры основных возрастных групп населения. 8. Территориальная структура расселения ГВПР РА не всегда способствует осуществлению на местном уровне административно-территориальных перемен. Нередко на упомянутых территориях отсутствуют удовлетворяющие видению укрупненных общин большие села (с населением более 3000 чел.), которые отделены от бывших райцентров, находятся вблизи от границ их динамичного радиуса или вне его и могут стать новыми местными центрами в системе расселения.

Рекомендации

1. В процессе разработки программ социально-экономического развития ГВПР РА, а также в процессе осуществления изменений административно-территориального деления, особенности и тенденции развития расселения необходимо учитывать в первую очередь.
2. В министерстве территориального управления и развития РА следует создать соответствующую подразделение для проведения работ по исследованию происходящих процессов расселения с целью разработки рекомендаций по эффективной организации и управления упомянутых процесов в ГВПР РА.
3. Правительству РА, региональным и местным органам самоуправления следует разработать и реализовать приоритетные социально-экономические программы, направленные на предотвращение сокращения численности населения, рациональное использование ресурсного потенциала ГВПР и укрепление обороноспособности страны
4. В современных условиях в укрупнении общин в ГВПР РА наиболее предпочтителен групповой вариант. Небольшие сельские поселения, находящиеся вне общей сети поселений, в зоне крайне неблагоприятной транспортной доступности относительно центра и имеющие тупиковое положение, должны иметь статус самостоятельной общины и получать регулируемые законом дополнительные привилегии и дотации.

SETTLEMENT PATTERN DEVELOPMENT PROBLEMS IN RA BORDERLANDS, MOUNTAINOUS AND HIGH MOUNTAINOUS AREAS

SUMMARY

The research aims to reveal the features and characteristics of RA mountainous, high mountainous and frontier areas population and settlements distribution, population number and settlement territorial structure, problems due to settlement dynamics and point out solutions.

Scientific novelty:

- RA borderlands, mountainous and high mountainous areas geographical research key issues have been worked out.
- For the first time, a complex geographical research of RA frontier, mountainous and high mountainous territories and subject mapping have been done.
- RA frontier, mountainous and high mountainous areas settlement dynamics tendencies, regional differences and current problems have been revealed.
- Grouping of RA frontier, mountainous and high mountainous areas rural settlements, which vary with population age structure and demographic situation, have been done.

- For the first time, the analysis and assessment of interrelations between administrative-territorial division and settlement terriotorial structure in RA frontier, mountainous and high mountainous territories have been done.

Based on the research outcomes, the following major conclusions and reccomendations are given: **1)** the complex geographical research of RA frontier, mountainous and high mountainous areas enables to reveal the features and characteristics of settlement pattern situation, find out current tendencies and problems in development processes, point out the ways of development. **2)** RA frontier, mountainous and high mountainous areas stand out with great disproportion of population and settlements territorial distribution, settledness indexes and population number significant differences. **3)** On the whole, rural settlements population number to a greater extent depends on cultivable land size. The index of settlement distribution has a big contrast in RA mountainous and high mountainous areas. Most of population lives inside the dynamic radious. These areas stand out with settlement territorial structure and rural settlements transport-geographical postion. **4)** Over the past three decades, the population declined in all of bordeland provinces (excluding Ararat and Armavir) and mountainous and high mountainous areas (excluding Ararat and Aragatsotn provinces): **5)** In mentioned areas, settlement dynamics current tendencies preservation and further deepening might cause to the emptying and gradual elimination of demographically unstable tiny and small rural settlements, reduction of populated area, ineffective use of territorial, agricultural and human potential. **6)** Mountainous and high mountainous rural settlements with population up to 1000 and borderland villages with population up to 200 are more vulnerable by population age structure. **7)** In many cases, there are no large rural settlements matching the vision of amalgamated municipalities (above 3000 population), separated from former regional centres, near or beyond their dynamic radious, which could pretend to become local centres of settlement system in RA frontier, mountainous and high mountainous areas.

Reccomendations

- Settlement pattern features and development tendencies should be primarily taken into account during RA frontier, mountainous and high mountainous areas socio-economic development programs planning and administrative-territorial division reforming procedures.
- Establish a division in ministry of territorial administration and development of RA, which will work out the processes taking place in RA frontier, mountainous and high mountainous areas settlement pattern and submit proposals for efficient organization and management of mentioned procedures.
- Socio-economic priority projects should be planned and implemented by RA government, regional and local government authorities, which will create conditions in borderlands, mountainous and high mountainous territories to prevent population decrease, efficiently use of resource potential and strengthen the country's defence capacity.
- In contemporary conditions, municipal amalgamation group scenario is more preferable in RA frontier, mountainous and high mountainous areas. Small rural settlements, which are separated from the primary net of settlements, located in an unfavorable transport accessibility zone, have an escalated position, should have a status of a community and get additional priviliges and subsidies regulated by law.